ԾՐԱԳԻՐ

10 ՏԱՐՎԱ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԻՔ-ԲՈՔՍԻՆԳԻ ԱԶԳԱՅԻՆ ՖԵԴԵՐԱՑԻԱ»

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ

I	ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	2
II	ՆԱԽԱԲԱՆ	3
III	ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ ...	3
IV	ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	4
V	ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 192 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՀԱՍՑԵՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ	5
VI	ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 192 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՀԱՍՑԵՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ.....	6
VII	ՎԵՐՋԱԲԱՆ	7

info@kickboxing.am

II ՆԱԽԱԲԱՆ

<<Հայաստանի քիք-բոքսինգի ազգային ֆեդերացիա>> հասարակական կազմակերպությունն հիմնադրվել է 16.03.2001 թվականին:Ֆեդերացիայի իրավաբանական հասցեն է 0054, ՀՀ, քաղաք Երևան, Դավիթաշեն 2 թաղամասի թիվ 192 միջին դպրոց: 2001 թվականից մինչ օրս ֆեդերացիան իրականացնում է մի շարք միջոցառումներ՝ ուղղված սպորտի զարգացմանը: 2001 թվականից մինչ օրս ֆեդերացիան իր հիմնական գործունեությունն իրականացնում է ՀՀ, Երևան քաղաքի թիվ 192 հիմնական դպրոցի ՊՈԱԿ-ին ամրագրված անշարժ գույք հանդիսացող շենք- շինությունում՝ սպորտդահլիճ՝ 351.5 քառ.մետր:

III ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Ֆեդերացիայի նախաձեռնությամբ և իրագործմամբ 12 արևելյան մարզաձևերի ֆեդերացիաների միջև կնքած հուշագրի շրջանակներում ֆեդերացիան որդեգրել է Հայաստանի Հանրապետությունում սպորտի տարածմանն ու զարգացմանն ուղղված քաղաքականություն՝ ինչն իր հերթին նպաստում է հանրապետությունում ձևավորել առողջ հասարակություն, ինչն ամրագրված է նաև Ֆեդերացիայի կանոնադրությամբ.

- Աջակցել Հայաստանի Հանրապետությունում քիք-բոքսինգի , ռազմական թաեքվանդոյի, «Արսենալ» սպորտային ասոցացիայի, «ՀԳՏՖԻ» թաեքվանդոյի, «Սավաթ» բոքսինգի, «Պանկրատյոն» պրոֆեսիոնալ ասոցացիայի, « Սոզվեզդիյե» սպորտային կազմակերպության, «Մարտիկ» ձեռնամարտի ազգային ասոցացիայի, «Հմուտ թիկնապահ» մասնագիտական կենտրոնի, Հայաստանի «Կենտրոն» ազգային ավանդական կարատե-դո-ի, Հայաստանի ավանդական ուշուի, Հայաստանի այկիդո-այկիկայի կազմակերպությունների մարզաձևերի զարգացմանը, հեռանկարային և խոստումնալից մարզիկների բացահայտմանը, նրանց մարզական վարպետության կատարելագործմանը:

- Աջակցել այն ծրագրերին, որոնք նպաստում են Հայաստանի Հանրապետությունում վերընշված կազմակերպությունների մարզաձևերի մասսայականացմանը:

- Բարոյապես և նյութապես օժանդակել սպորտի ներկայացուցիչներին, ֆինանսական օգնություն ցուցաբերել լավագույն մարզիկներին և նրանց մարզիչներին:

- Օժանդակել սպորտային բազաների և շինությունների կառուցմանը, վերակառուցմանը և վերանորոգմանը:

Ֆեդերացիայի կողմից անցկացվող ամենօրյա անվճար մարզումների արդյունքում հնարավորություն է ստեղծվում, թե Դավիթաշեն վարչական շրջանի և, թե այլ վարչական շրջանների պատանիներին և երիտասարդներին անվճար մարզվել, ճիշտ օգտագործել ազատ ժամանակը, վարել առողջ ապրելակերպ, զերծ մնալ վնասակար սովորություններից՝ ինչպիսիք են հարբեցողությունը, թմրամոլությունը և այլն:

Ֆեդերացիայի կողմից պարբերաբար անցկացվող և կազմակերպվող մրցումներին և մրցաշարերին մասնակցում են մարզիկներ ոչ միայն Երևան քաղաքից, այլ նաև հանրապետության տարբեր մարզերից և ֆեդերացիայի համակենտրոն նիստերի դահլիճում անցկացվող սեմինարներ Երևան քաղաքի թիվ 192 հիմնական դպրոցի հասցեում:

Ֆեդերացիան համագործակցում է պետական՝ Երևանի քաղաքապետարանի, ՀՀ ոստիկանության, ՀՀ պաշտպանության նախարարության, մասնավոր կազմակերպությունների և պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ:

IV ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Երևան քաղաքի գրեթե բոլոր վարչական շրջաններում գործում են տարբեր սպորտային խմբակներ, որոնք կազմակերպում են վճարովի մարզումներ, որոնց ամսական գումարը թվում է կազմում է չնչին գումար, սակայն իրականում այն հասանելի է ոչ բոլորի համար: <<Հայաստանի քիք-բոքսինգի ազգային ֆեդերացիա>> հասարակականկազմակերպության կողմից կազմակերպվող և անցկացվող ամենօրյա մարզումները լինելու են բացառապես անվճար և հասանելի բոլոր նրանց համար, ովքեր ցանկանում են մարզվել, ապրել առողջ ապրելակերպով և հասկանում են սպորտի դերն ու նշանակությունը մարդու համար: Ֆեդերացիան սերտ աջակցելու է հանրակրթական դպրոցների հետ:

Ֆեդերացիան ունի իր անձնական ինտերնետային էջը www. **kickboxing.am** հասցեով:

2010 թ-ին ֆեդերացիան WAKO համաշխարհային ֆեդերացիայի կողմից ճանաչում է ձեռք բերել Հայաստանի Հանրապետությունում և ընդգրկվել է, որպես անդամ համաշխարհային ֆեդերացիայի կողմից:

V <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԻՔ-ԲՈՔՍԻՆԳԻ ԱԶԳԱՅԻՆ ՖԵԴԵՐԱՑԻԱ>> ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 192 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՀԱՍՑԵՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Ֆեդերացիան իր գործունեությունը իրականացնում է ՀՀ, Երևան քաղաքի թիվ 192 հիմնական դպրոցի ՊՈԱԿ-ին ամրագրված անշարժ գույք հանդիսացող շենք- շինությունում /սպորտդահլիճում/:

Նշված շինությունը ի սկզբանե գտնվում էր անմխիթար վիճակում:

Այստեղ կատարվել է կապիտալ վերանորոգում՝ մասնավորապես ամբողջությամբ փոխվել են դռները՝ 26 քառ.մետր, փոխվել է հատակը՝ 351.5 քառ.մետր, վերանորոգվել են հանդերձարանները, ամբողջությամբ վերանորոգվել է սանհանգույցը և լոգարանը, հիմնովին փոխվել են ջրամատակարարման և ջրահեռացման խողովակները, փոխվել է նաև էլեկտրոէներգիայի սնուցման լարերը, մարզադահլիճի ներսում ամրացվել են պատերը, կատարվել են գաջապատման և ներքին հարդարման աշխատանքներ, ամբողջովին վերանորոգվել է սպորտային դահլիճը, տեղադրվել է մարզական գույք և ռինգ:

Զգալի աշխատանքներ են կատարվել նաև բակային տարածքում: Մարզահամալիրի բակային տարածքը մաքրվել է աղբից, բարեկարգվել է, տնկվել են ծառեր:Ֆեդերացիայի նախաձեռնությամբ 2010 թ-ին Երևանի թիվ 192 հիմնական դպրոցի բակային տարածքում տեղադրվել է հուշարձան-խաչքար նվիրված պատերազմի տարիներին զոհված մարզիկների և մարզիչների հիշատակին:

Վերը թվարկված բոլոր աշխատանքների իրականացման համար ծախսվել է շուրջ 38 միլիոն դրամ:

Անհրաժեշտ է նշել, որ մարզահամալիրը առանց որևէ նախապայմանի, անվճար հիմունքներով տրամադրվել է թիվ 192 հիմնական դպրոցի աշակերտներին, ինչպես նաև Երևան քաղաքի մյուս վարչական շրջանների բոլոր ցանկացողներին:

VI ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 192 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՀԱՍՑԵՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ֆեդերացիան ունենալով Սամվել Գևորգյանի անունը կրող նորակոչիկների համար նախատեսված ռազմական լսարան Ֆեդերացիայի կողմից նախատեսվում է ավելացնել ուսումնական հրաձգարան:Գնալով ավելանում է մարզահամալիր հաճախողների թիվը՝ Ֆեդերացիայի կողմից նախատեսվում է կատարել մարզադահլիճի վերահատակագծում՝ այն ավելի ընդարձակ դարձնելու նպատակով՝ չփոփոխելով մարզադահլիճի արտաքին տեսքը: Անհրաժեշտությունից ելնելով նախատեսվում է նաև ավելացնել ևս մարզական գույք,գորգ և բոնցքամարտի ռինգ:

Ֆեդերացիան հետամուտ լինելով իր որդեգրած քաղաքականությանը՝ շարունակելու է նպաստել Հայաստանի Հանրապետությունում ֆիզկուլտուրայի և սպորտի զարգացմանն ու կատարելագործմանն ուղղված միջոցառումների անցկացմանը:

Ֆեդերացիան շարունակելու է կազմակերպել ամենօրյա տարբեր մարզաձևերի գծով մարզումներ, բաց առաջնություններ և այլ մասսայական միջոցառումներ՝ բացառապես անվճար հիմունքներով:

Ֆեդերացիան աջակցություն է ցուցաբերելու կարիքավոր մարզիկներին, մարզիչներին:

Ծրագրվում է մարզադահլիճը ավելացնել տարբեր սպորտաձևերի համար նախատեսվող մարզասրահներով և ավելացնել համապատասխան ուսումնական հրաձգարան նորակոչիկների համար:: Վերը նշված աշխատանքների իրականացումը նախատեսվում է սկսել 2014 թվականից սկսած 10 տարվա ժամանակահատվածում յուրաքանչյուր տարի հավասարաչափ: Նախատեսվում է ներդնել 10 միլիոն դրամ: Ներդրումները նախատեսվում է իրականացնել աշխատանքների և գումարների հետևյալ չափաբաժիններով՝

Աշխատանքների անվանումը	**Ներդրվող գումարի չափը /1000 դրամ/**
ա/ նախագծի կազմում և հաստատում բ/ տարածքի նորոգման և հարդարման աշխատանքներ	500.000 3.500.000
Հատակի փոխում և վերանորոգում	2.500.000
Մարզական գույք, գորգ և բոնցքամարտի ռինգ	3.500.000

Նախատեսվում է շինարարական աշխատանքների իրականացմանը զուգահեռ շարունակել մարզադահլիճը ծառայեցնել ըստ իր ֆունկցիոնալ նշանակության:

VII ՎԵՐՋԱԲԱՆ

Որպես վերջաբան հարկ եմ համարում նշել, որ վերը թվարկված ծրագրերը իրականացվում է <<Հայաստանի քիք-բոքսինգի ազգային ֆեդերացիա>> հասարակական կազմակերպության կողքին կանգնած բարերար անձանց կողմից և բացառապես նրանց անձնական միջոցների հաշվին և լինելու են շարունակական: Ակնկալում ենք, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը նույնպես իր լուման կներդնի այս բազմամյա և շարունակական ծրագրի իրականացմանն ուղղված աշխատանքներին՝ <<Հայաստանի քիք-բոքսինգի ազգային ֆեդերացիա>> հասարակական կազմակերպությանը 10 տարի անհատույց օգտագործման իրավունքով հատկացնելու ՀՀ, Երևան քաղաքի թիվ 192 հիմնական դպրոցի ՊՈԱԿ-ին ամրագրված անշարժ գույք հանդիսացող շենք - շինությունը/ սպորտդահլիճը՝ 351.5 քառ.մետր/:

Հայաստանի քիքի-բոքսինգ Ազգային
ֆեդերացիայի նախագահ՝ Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԻՔ ԲՈՔՍԻՆԳԻ
ԱԶԳԱՅԻՆ ՖԵԴԵՐԱՑԻԱ
NATIONAL KICKBOXING
FEDERATION OF ARMENIA

НАЦИОНАЛЬНАЯ
ФЕДЕРАЦИЯ
КИКБОКСИНГА

Ջ-ԲՈՔՍԻՆԳԻ ԱԶԳԱՅԻՆ ՖԵԴԵՐԱՑԻԱ

50
















ՍԵԽԱՐՇԸ, ՀԱՅՐԵՆԻՔԸ,
ՀԱՅԱՍՏԱՆ
ՍՅՈՒՆԻՔԸ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉ

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԱՌԱՔԻՆՈՒԹՅՈՒՆՆԵ
ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻՆ՝ ՀԱՍՏԱՏՈՒՆ ՔԵԹՈՒՆՔ:

ԵՂԻՇԱՅԻ ՀՈՒՇԱՐ ՍԱՐԳԻՍ ԱՀԱՏԱՄԱՐՏԻՆԵՐԻ